

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԹԵՔԷԼԵԱՆ ԵՒ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ 1972ԻՆ ԻՐ ՀԻՄՆԱԾ ԹԵՔԷԼԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԸ

ՌՈՒՊԻՆԱ ԱՐԹԻՆԵԱՆ
roubina.alahaydoyan@gmail.com

ՄՈՒՏՔ


Ծանոթություն՝ Մինաս Թեքելեանին հետ սկսած է 1960ականներուն, երբ աշակերտ էի Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ, իսկ ինք ուսուցիչ՝ նոյն հաստատութեան մէջ: Ես կը հետեւէի դաշնամուրի եւ տեսական նիւթերու դասընթացքներուն, իսկ ինք կը դասաւանդէր փողային նուագարաններ, ի մասնաւորի՝ գալարափող (ֆրենչ հորն) ու բամբաջու-թակ (քոնթրապաս) եւ մաս կը կազմէր երաժշտանոցին նուագախումբին: Ան յաճախ կը հետաքրքրուէր մեզմով՝ հայ աշակերտներու աշխատանքներով եւ ձեռքբերումներով ու միշտ կը քաջալերէր մեզ:

Մենք՝ հայ աշակերտներս դոյզն գաղափարն իսկ չունէինք այս կենսու-րախ մարդուն՝ Մինաս Թեքելեանի անցած կեանքի դառն ճանապարհին մասին, թէ ան ճաշակած էր Մեծ Եղեռնի արհաւիրքը, դարձած որբ, հասակ նետած զանազան որբանոցներու մէջ, բայց հակառակ այդ բոլորին՝ զարգացուցած իր բնատուր սէրը երաժշտութեան հանդէպ, երաժշտութիւնը դարձուցած իր կեանքի իմաստը, դարձած փնտռուած երաժիշտ Լիբանանի եւ Միջին Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ, մինչեւ իսկ արժանացած Լիբանանի պետութեան կողմէ «Մայրիներու արժանեաց» շքանշանին:


Անցան տարիներ եւ 1972ին ան իրականացուց իր կեանքի երազը եւ հիմնեց Թեքելեան Նախապատրաստական երաժշտանոցը, վաւերացուած լիբանանեան պետութեան թիւ 4006 արտօնագրով: Այդ երաժշտանոցին մէջ, մատղաշ աշակերտներ պիտի առնէին իրենց երաժշտական առաջին քայլերը եւ սորվէին - զանազան նուագարաններ նուագելու կողքին - նախապատրաստական տեսական գիտելիքները, իսկ աւարտելէ ու ստանալէ ետք երաժշտանոցին վկայականը, պիտի կարենային Պետական երաժշտանոց մուտք գործել, քանզի բոլորովին սկսնակ աշակերտներ չէին ընդունուեր Պետական երաժշտանոց: Եղան աշակերտներ որոնք բաւարարուեցան Թեքելեանէն ստացած իրենց վկայականով, մինչ ուրիշներ իրենց երաժշտական ուսումը շարունակեցին Երեւանի, Եւրոպայի կամ Միացեալ Նահանգներու մէջ, սակայն մեծամասնութիւնը Պէյրութի Պետական երաժշտանոցին մէջ շարունակեց իր երաժշտական ուսումը:

1974ին Մինաս Թեքելեան զիս հրապարակեց միանալու երաժշտանոցի ուսուցչակազմին ու ես 1975էն մինչեւ 1990, պաշտօնավարեցի այնտեղ:

1975-90 շրջանը Լիբանանի տխրահռչակ պատերազմի տարիներն էին: Յաճախ երաժշտանոցէն ներս դասաւանդութեան ատեն կը սկսէին ոմբակոծումները: Պէյրուօք բաժնուած էր երկու շրջաններու՝ Արեւելեան եւ Արեւմտեան: Մենք կը բնակէինք արեւմտեան կողմը՝ Զարիֆ թաղ, իսկ երաժշտանոցը կը գտնուէր Պէյրուօքի արեւելեան կողմը՝ Մար Մըխայէլ, Տօնիկեան գրատան շատ մօտիկ հին շէնքի մը երկրորդ յարկը:



Երաժշտանոցին արաբերէն եւ ֆրանսերէն կնիքները եւ վկայականը



Յաճախ, տունէս մինչեւ երաժշտանոց ողջ-առողջ հասնելէ եւ դասաւանդելէ ետք, վերադառնալու մղձաւանջը ջլատիչ կը դառնար, երբեմն ալ կը

հարկադրուի քալելով անցնիլ Պէյրուֆի բաժանման գիծը: Սակայն երաժշտանոցէն ներս ճիշտ հակապատկեր վիճակ կար, ջերմ մթնոլորտ կը տիրէր: Մայրեր իրենց զաւակներուն ձեռքէն բռնած եկած կը սպասէին զիս, որպէսզի անոնց սիրասուններուն մէջ արթնցնեմ երաժշտութեան սէրը եւ իրենց մատղաշ մատները նուագելու արունստին վարժեցնեմ: Նաեւ կար պարոն Թեքէլեանին կինը՝ տիկին Ովսաննան (Ովսաննա Տեկիրմենճեան-Թեքէլեան, 1923--2006), որ իր մշտական ներկայութեամբ, պահապան հրեշտակի նման աշակերտներուն եւ մեզի՝ ուսուցիչներու, հոգատարութիւն կը կատարէր իր խրատներով, զգուշացումներով եւ հիւրասիրութիւններով:

Այդ աշակերտներուն մէջ կային տաղանդաշատ փոքրիկներ, որոնք յետագային դարձան արհեստավարժ երաժիշտներ: Այդ տարիներուն, հակառակ մեր սպասումներուն, պատերազմը կը շարունակուէր, սակայն մենք՝ Թեքէլեան երաժշտանոցի ուսուցիչներս անվարան կը շարունակէինք մեր առաքելութիւնը: Կը կազմակերպէինք տարեկան աշակերտական հրապարակային համերգեր՝ մեր աշակերտները բեմին վարժեցնելու համար: Կանոնաւորապէս կը կազմակերպէինք քննութիւնները, կը հրաւիրէինք Պետական երաժշտանոցի ուսուցիչներ՝ դատակազմի անդամ ըլլալու քննութիւններուն ատեն: Դատակազմի այս անդամները կը հիւսնային տարուած աշխատանքին եւ անհամբեր կը սպասէին որ մեր աշակերտները աւարտէին Թեքէլեանն ու Պետական երաժշտանոցին մէջ դառնային իրենց աշակերտները:

Երաժշտանոցին մէջ ուսուցչակազմին փոխգործակցութիւնը շատ սերտ էր, միասին կը ծրագրէինք, կ'որոշէինք քննութեան պարտադիր կտորները, միշտ նկատի առնելով հայկական եղանակներ ընդգրկելու անհրաժեշտութիւնը: Ուսուցչակազմը լաւ յարաբերութիւն հաստատած էր նաեւ Պետական երաժշտանոցին ուսուցիչներուն հետ:

ՄԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԹԵՔԷԼԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիբանահայ մամուլը 1972ին կ'աւետէր նոր հիմնադրուած Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցին բարի լուրը, խրախուսիչ յօդուածներով: Այսպէս, *Այգ* օրաթերթի յօդուածագիրը կը գրէր.

Հայ երաժիշտ մըն է նախաձեռնողը, կազմակերպողը եւ իրականացնողը, Մինաս Թեքէլեան: Իր տեսակին մէջ առաջին երաժշտական դպրոցը մեր իրականութեան մէջ, հիմնուած հայու մը կողմէ: Մինաս Թեքէլեան տասը տարիէ իվեր կը պաշտօնավարէր Պէյրուֆի Ազգային երաժշտանոցին մէջ, ուր պատրաստած է որակաւոր աշակերտներ, փշողական գործիքներու նուագի ուսուցումով: Այսօր ան ձգած է Ազգային երաժշտանոցը, եւ նուիրուած անհատական այսպիսի ձեռնարկի մը: ...Մար Մըխայէլի շրջանին մէջ (Թահան շէնք, Տօնիկեան գրատան մօտ) հիմնուած այս նորատեսակ երաժշտական դպրոցը արժանի է քաջալերանքի: Նոյնիսկ մեր մշակութային միութիւնները հարկ է որ զօրավիզ կանգ-

նին անոր, որպէս իւրայատուկ նախաձեռնութիւն, ինչ որ իր օգուտը պիտի ունենայ մեր մշակոյթին եւ գեղարուեստին զարգացման¹:

Իսկ *Ազդակ* օրաթերթի երաժշտական քննադատը, երաժիշտ Պետրոս Ալահայտոյեան կը գրէր.

Հայկական գաղթաշխարհի առաջին երաժշտանոցը ծնած է: Երկու տարիներու տենդագին եւ ցաւատանջ երկունքէ մը ետք, հիւանդ սրտով մարդու մը քաջառողջ կամքին արդիւնքը եղող, համեստ ու լռակեաց հայ ուսուցիչի մը տարիներու մտասեւեռումը հանդիսացող հայ եւ ոչ-հայ մատաղ սերունդին երաժշտական հիմնական առաջին գիտելիքները բաշխող այս թանկագին կառոյցը ոտքի վրայ է: Ա՛յն՝ որ պետութեան մը ջանքերով միայն կարելի է իրագործել, ա՛յն՝ որ համազգային ուժերու գործակցութեամբ կարելի է յաջողցնել միայն, ա՛յն՝ որ կարելի կ'ըլլայ միայն բազմապիսի գործերու մէջ հասունութիւն ու հմտութիւն ցոյց տուած անձերու համերաշխ գործակցութեամբ, իրագործուած է մէկ հատիկ հայ ուսուցչապետի մը մտքին, կորովին, շարունակական ճիգին եւ տարիներու տքնաջան ու պարկեշտ աշխատանքով մէկտեղուած վաստակով, այսինքն՝ [սեփական] պիտոճեով: ...Հինգշաբթի, 19 Հոկտեմբեր, կէսօրէ ետք պիտի տրուի անդրանիկ դասը (դաշնակ): Կ'այցելեմ դպրոցը: Հայաիո՞ծ շրջանի մը սրտին բուսած գեղեցիկ ծառ մըն է անիկա: Ահա՛ առաջին դաշնակը: Ահա՛ առաջին ուսուցչուհին՝ օր. Նորա Ռումեան: Ահա՛ առաջին աշակերտուհին՝ փոքրիկն Սիւզի Փարթամեան, եւ ահա՛ առաջին երաժշտական շունչը: Կեանքը սկսած է, առաջին բջիջը՝ բաբախած: Վաղը, Ուրբաթ օր, օր. Ռումեան պիտի ունենայ երկու ուրիշ աշակերտներ: Շաբաթ օր, կը սպասուին հինգ կամ վեց ուրիշներ: Ապրի՛ս, պր. Թեքէլեան: Ապրի՛ս, հայու կամք²:

Իսկ ինք՝ երաժշտանոցին տնօրէն Մինաս Թեքէլեան, այսպէս կ'արտայայտուի երաժշտանոց հիմնելու իր որոշումին գլխաւոր մղումին եւ նիւթական կարելիութեան մասին, հարցազրոյցի մը ընթացքին.

Երբ ստացանք պետական արտօնագիրը, մեր գրպանին մէջ ունէինք միայն հինգ լիբանանեան ոսկի. մէկ աշակերտով կատարեցինք բացումը երաժշտանոցին: Համբերանքով շարունակեցինք մեր ճանապարհը, յաճախ հանդիպելով մեզի յատուկ դժուարութեանց:... Երբ պետական երաժշտանոց կը դիմէին հայ մայրեր իրենց զաւակներով, տեղ չըլլալու պատճառով տնօրէնութիւնը հարկադրուած կ'ըլլար մերժելու դիմումները: Յետոյ կը տեսնէի անոնց տխուր վերադարձը: Այդ պահերուն, ամէն անգամ, մտովի կրկնած եմ՝ պէտք է երաժշտանոց մը բանամ, որպէսզի տխուր չմնան այս մանուկները³:

Մտաւորական Յակոբ Կիւլոյեան այսպէս կը նկարագրէ Թեքէլեան երաժշտանոցը.

¹ Ս. Պ. «Գեղարուեստ. Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոց», *Այգ*, 10 Հոկտեմբեր 1972:

² Պետրոս Ալահայտոյեան, «Թեքէլեանի անուան նախակրթական երաժշտանոցը Պէյրութի մէջ», *Ազդակ*, 21 Հոկտեմբեր 1972:

³ Յակոբ Կիւլոյեան, «Որպէսզի տխուր չմնան երաժշտասէր մանուկները», *Ազդակ*, 28 Մարտ 1981:

'Արմենիա' փողոցի համեստ մէկ անկիւնը, մաշած սանդուխներով մուտքի մը ճակատին կը կարդանք «Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոց» փոքր ցուցատախտակ մը: Զգուշաւոր բայց հաստատակամ կը բարձրանանք սանդուխներէն, հասնելու համար այն յարկը՝ ուր փեթակի մը կեանքով երաժշտասէր նոր սերունդ մը կը սնանի ուսուցչական աշխուժ կազմով մը: ... Կը նայիմ շուրջս, ծնողներ իրենց զաւակներով կը ժամանեն, պարման ու պատանի տղաք երաժշտական գործիքներով... ու պատերազմը կը մոռնանք պահ մը, կանգնած՝ խաղաղութեան սեմին պատուաբեր հաստատութեան մը, օգտաշատ իր կեանքով: Հարիւր վաթսունէ աւելի աշակերտներու ծայնական հնչեղ խաղերը կը պարուրեն մթնոլորտը: Կը հիանանք, կ'ոգետորուինք, հրճուանքի մը ամբիոնէն կը դիտենք կեանքը, պատերազմը ... կը գօտեպնդուինք վտանգներուն դէմ՝ արուեստին նուրբ խաղերով մեր սերունդները կը սնանին դիմաւորելու ռումբերու ու զէնքերու պայթումները...: Բախտաւորութիւն է ունենալ հայկական երաժշտանոցի մը մթնոլորտը, թէկուզ քաղաքի լեցուն շէնքերու մէջէն այս կէս յարկաբաժինը վիճակուած ըլլայ մեզի: Շատ շէնքեր ունեցողներ չունեցան նման անկիւն մը, զոր ունեցան [մեր այս] հայ մանկտիքը...⁴:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոց կ'ընդունուին հայ թէ ոչ-հայ աշակերտներ անխտիր: Երաժշտանոցը կը բաղկանայ եօթը դասարաններէ՝ Նախապատրաստական Ա. եւ Բ. կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններ եւ հինգերորդ աւարտական դասարան: Աշակերտը աւարտական դասարանէն ետք, հրապարակային ձեռնարկի մը ընթացքին, դատական կազմի ներկայութեան, քննութիւն կու տայ պատրաստած ծրագիրով: Յաջողութեամբ աւարտող աշակերտը կը ստանայ պաշտօնական վկայական՝ «լա», «շատ լա», «բացառիկ լա» գնահատականներով:

Երաժշտանոցը սկիզբէն կ'որդեգրէ Լիբանանի Պետական երաժշտանոցի լրիւ ծրագիրը եւ կ'ունենայ Պետական երաժշտանոցին տնօրէնութեան քաջալերանքն ու գործակցութիւնը: Ուսումնաշրջանի վերամուտը Հոկտեմբեր ամսուն է: Ընդունման պայման չկայ. 6 տարիքը բոլորած աշակերտը կրնայ արձանագրուիլ: Ծրագիրը կ'ընդգրկէ պարտադիր *սոլֆեժ* եւ *թէորիի* դասերը: Որեւէ նուագարանի ծրագիր անպայման կ'ընդգրկէ *gamme*, *arpege*, *e'tude* եւ Bach, նաեւ՝ իր դասարանին համեմատ պատշաճ դժուարութեամբ *sonate* կամ այլ յօրինում մը: Այս ծրագիրը տարուէ տարի կը դժուարանայ՝ քանի աշակերտը դասարան կը բարձրանայ: Աշակերտը իւրաքանչիւր դասի համար ունի շաբաթական մէկ պահ, 45 վայրկեան տետողութեամբ: Սակայն բարձր դասարաններու աշակերտներուն դասապահերը աւելի երկար են, վաթսունէն եօթանասունհինգ վայրկեան:

⁴ Նոյն:

Երաժշտանոցին առաջին տարիներուն դասաւանդուած նուագարաններն են.- դաշնամուր, թաւջութակ, կիթար, ջութակ եւ սրինգ: Երաժշտանոցը սկիզբի տարիներուն ունեցած է աշակերտական երգչախումբ, զոր կազմած է երաժշտանոցին հիմնադիրը: Մինաս Թեքէլեանի մտադրութիւնը եղած է նաեւ դասաւանդել վիոլա, օպուա, քոր, թրոմփէթ, թրոմպոն, թիւպա, թեմփանի եւ քոնթրապաս: Ան սկիզբի շրջանին անձամբ դասաւանդած է փողային գործիքները, սակայն իր առողջական վիճակին վատթարացումը, ապա մահը եւ ուսուցիչներու երկրէն մեկնումը պատերազմի տարիներուն, պատճառ կը դառնան որ այդ գործիքներու դասաւանդութիւնը դադրի: Մինաս Թեքէլեան, հայկական դիմագիծը պահպանելու մտադրութեամբ, կը ծրագրէ կազմել փոքրիկներով կազմուած **քանոնի** խումբ մը, Երեւանի մէջ գոյութիւն ունեցող քանոնահարներու խումբին օրինակով, եւ յատուկ պատուէրով Երեւանի մէջ պատրաստել տալ մասնաւոր չափի քանոններ փոքրերու համար: Սակայն այս մտադրութիւնը չ'իրականանար բազում դժուարութիւններու եւ պատերազմին պատճառով:

Երաժշտանոցին մէջ կանոնաւոր դասաւանդութիւնները կը շարունակուին հակառակ պատերազմին: Տարեկան տեղի կ'ունենան երկու քննութիւն՝ կիսամեայ եւ ամապերջի, Պետական երաժշտանոցէն հրաւիրուած դատական կազմի ներկայութեան: Ընդհանրապէս դատական կազմին մէջ կ'ըլլան հայագգի վարպետ երաժիշտներ՝ Ալիս Մանուկեան, Պօղոս Ճելալեան եւ Մատլէն Փեհլիւանեան-Մըտաուար (այսօր բոլորն ալ մահացած):

Ընդհանրապէս շրջանաւարտի մը ներկայացուցած հրապարակային քննութեան ծրագիրը կ'ընդգրկէ պարոք շրջանի Պախի ստեղծագործութիւններէն մին, դասական շրջանէն *սոնաթա* մը Մոցարթէն, Հայտընէն կամ Պեթովէնէն եւ յօրինում մը 19րդ կամ 20րդ դարու երաժիշտներու յօրինումներէն: Օրինակի համար շրջանաւարտի մը հրապարակային ելոյթի նուագացանկը եղած է Պախ՝ *Partita No. 1 (Allemande, Courante, Menuet I & II, Gigue)*, Մոցարթ՝ *Sonate No. 8, A min. KVV310, (first mov. Allegro Maestoso)*, Ճելալեան՝ *Sonate Breve (Allegro, Andante, Allegro)*:

Երաժշտանոցին հրապարակային աշակերտական առաջին ծեռնարկը տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Փետրուար 1975ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի Էսեմպլի հոլին մէջ: Աննախընթաց այս համերգին աննախընթաց կ'ըլլայ նաեւ ներկայութիւնը ունկնդիրներուն, որոնց համար սրահին 750 աթոռները քիչ կու գան: Յայտագիրը կը սկսի սկսնակ աշակերտներու նուագներով եւ կը շարունակուի հետզհետէ աւելի բարձր դասարաններու աշակերտներու աւելի դժուար եղանակներու նուագներով: Այսպէս, 16 հայ աշակերտներ ելոյթ կ'ունենան, մեծամասնութիւնը՝ դաշնամուր, իսկ երեքը՝ ջութակ: Նուագուած եղանակներու հեղինակներն են՝ Խաչատուրեան, Կոմիտաս, Պօղոս Ճելալեան, Մոցարթ, Յարութիւնեան, Շոփէն, Պախ, Պեթովէն, Ռախմանինոֆ, Սայց, Վան Տը Վելտ, Տիապելլի եւ Քիւլօ: Ելոյթ ունեցող աշակերտներուն ուսուցիչներն են Սալբի Իշխանեան, Սօնա Ճապաղջուր-

եան-Խոշաֆեան, Կիւրեղ Մանկրեան, Թաթիանա Մարտիկեան, Նորա Ռումեան: Զուգակահարներուն դաշնակի վրայ կ'ընկերակցին դաշնակի ուսման մէջ յառաջացած աշակերտներ: *Օքլէր փըլա լիւն* մանկական եղանակով սկսած յայտագիրը իր աւարտին կը հասնի Պախի դաշնամուրի *Ռէմինտօր քոնչերթոյով*:

Մէկ ամիս անց, 25 Մարտ 1975ին, դարձեալ նոյն սրահին մէջ, այս անգամ Թեքէլեան երաժշտանոցի ուսուցիչներ՝ Իշխանեան, Խոշաֆեան, Մարտիկեան, Ռումեան եւ Ֆայէզ Օլապի, կու տան բարձրորակ համերգ մը: Յայտագիրին առաջին կատարողն է դաշնակահարուհի Մարտիկեան, որ կը մեկնաբանէ Տեպիսիէն երեք *փրելիւր*՝ *Le vent dans la plaine, Ce qu'a vu le vent d'Ouest, Feux d'artifices*: Ապա բեմ կը բարձրանայ Օլապի եւ Ռումեանի ընկերակցութեամբ կը նուագէ Պախի *Adagio in C Maj* եւ Յարութիւնեանի *Էմփրոմթին*: Յաջորդը կ'ըլլայ Իշխանեանը, որ կը մեկնաբանէ Կրիկի *Սոնաթա* op. 7ը: Ապա դարձեալ Մարտիկեան հանդէս կու գայ այս անգամ Ռաւէլի *Ondine* ստեղծագործութեամբ: Համերգը իր աւարտին կը հասնի Մենտլիսընի չորս մասերէ բաղկացած *Trio in D min. Op. 49*ով, մեկնաբանուած Ռումեան (դաշնամուր)-Խոշաֆեան (ջութակ)-Օլապի (թաւջութակ) երրեակին կողմէ:

Այնուհետեւ տեղի ունեցան նաեւ այլ համերգեր եւս:

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցի ուսուցչակազմի բոլոր անդամները շրջանաւարտ են Պէյրութի Պետական երաժշտանոցէն. ումանք ապա շարունակած են իրենց երաժշտական մասնագիտութիւնը Փարիզի Էքոլ նորմալի մէջ կամ այլուր: Սկիզբի շրջանի ուսուցչակազմը կը բաղկանայ հետեւեալ երաժիշտներէն.- դաշնամուր՝ Արաքսի Ալթունեան, Ռուպինա Արթինեան, Պելլա Էսմէրեան, Սալբի Իշխանեան, Թաթիանա Մարտիկեան⁵, Նորա Ռումեան, Արփի Սաղազաբեան, Անի Սարաֆեան: Զութակ՝ Յակոբ Էսմէրեան, Լուսինէ Պալիկեան, Սարգիս Քսաճըքեան: Թաւջութակ՝ Զուարթ Սարգիսեան, Կիթար՝ Ռաֆֆի Սափսըզեան:

ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻՆ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ⁶

1972-2022 շրջանին, երաժշտանոցը ունեցած է 110 շրջանաւարտ, որոնց 25ը՝ ոչ-հայեր: Շրջանաւարտներէն 104ը ստացած են դաշնամուրի վկայական, չորսը՝ ջութակի, իսկ երկուքը՝ կիթարի: Առաջին շրջանաւարտն է Լեւոն Քիւրքեան, դաշնամուր, 1976ին: Ան յետագային Վիեննայի մէջ իր երաժշտական ուսումը շարունակած է եւ դարձած օփերայի երգչուհի:

⁵ Թաթիանա Մարտիկեան ծնած էր Պէյրութ, 1948ին: Ան մահացաւ 2022ին, Համպուրկ:

⁶ Այլն Պոտաքեան-Թեքէլեան՝ ներկայ տնօրէնուհին հայթայթեց շրջանաւարտներու այս ցանկն ու տուեալները. անոր կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Չորս ջութակի շրջանաւարտներէն Հրաչ Սարգիսեան (1980) եւ Փիէր Գարակէօզեան (1980) շարունակած են իրենց երաժշտական ուսումը Միացեալ Նահանգներու մէջ, երրորդը՝ Կարօ Պասմաճեան (1988) Երեւանի մէջ շարունակած եւ մասնագիտացած վերադարձած է Պէյրութ, ուր Պետական երաժշտանոցին մէջ ջութակ կը դասաւանդէ եւ մաս կը կազմէ Լիբանանի ֆիլիարմոնիք նուագախումբին, իսկ չորրորդը՝ Ծալի Թորիկեան (2019) շարունակած է իր երաժշտական ուսումը Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ:

Երաժշտանոցի կիթարի երկու շրջանաւարտներն են՝ Հրաչ Թորթաթեան (1988) եւ Մարք Մելքի (2008):

Երաժշտանոցի 110 շրջանաւարտներէն 55ը իրենց երաժշտական ուսումը շարունակած են Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ⁷, չորսը՝ Միացեալ Նահանգներու մէջ, երեքը՝ Երեւանի մէջ, երկու հոգի Վիեննա մեկնած են, մէկ հոգի՝ Ֆրանսա, ուրիշ մը՝ Քալիֆոռնի (Լիբանան) Սենթ Էսփրի համալսարանի երաժշտագիտութեան բաժինը եւ մէկ հոգի՝ Լիբանանի Նոթթըր տամ տը Լուայզէ համալսարանը:

Եղած են տարիներ, երբ Թեքէլեան երաժշտանոցը շրջանաւարտ չէ ունեցած: Ստորեւ՝ երաժշտանոցին շրջանաւարտներու բերքը ըստ տարեթիւի:

1976ին մէկ շրջանաւարտ, 1978ին երկու շրջանաւարտ, 1979՝ երկու, 1980՝ չորս, 1981՝ չորս, 1982՝ երկու, 1983՝ երկու, 1984՝ ինը, 1985՝ վեց, 1986՝ ինը, 1987՝ հինգ, 1988՝ ինը, 1991՝ մէկ, 1992՝ մէկ, 1993՝ երկու, 1994՝ ինը, 1995՝ մէկ, 1996՝ մէկ, 1997՝ չորս, 1998՝ երեք, 1999՝ չորս, 2000՝ մէկ, 2001՝ չորս, 2002՝ երեք, 2004՝ չորս, 2006՝ երկու, 2007՝ հինգ, 2008՝ երեք, 2012՝ մէկ, 2016՝ մէկ, 2019՝ մէկ, 2021՝ երկու, 2022՝ երկու:

Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցի շրջանաւարտները									
Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.	Տարի	Շրջ.
1976	1	1984	9	1993	2	2000	1	2008	3
1978	2	1985	6	1994	9	2001	4	2012	1
1979	2	1986	9	1995	1	2002	3	2016	1
1980	4	1987	5	1996	1	2004	4	2019	1
1981	4	1988	9	1997	4	2006	2	2021	2
1982	2	1991	1	1998	3	2007	5	2022	2
1983	2	1992	1	1999	4				

Շրջանաւարտներու քննութիւնները տեղի ունեցած են հրապարակային ձեռնարկներով, հանրութեան եւ դատական կազմի ներկայութեան, Պէյրութի զանազան հանդիսասարահներու մէջ, ինչպէս՝ Ամերիկեան համալսարանի Էսենայի հոլ, Պուրճ Համուտի Յակոբ Տէր Մելքոնեան սրահ, Էշրեֆիէի Հայ կաթողիկէ պատրիարքութեան Արարատեան սրահ: Երբ շրջանա-

⁷ Ասոնցմէ երեքը շրջանաւարտած են ուսուցիչ ունենալով Պօղոս Ճելալեանը:

արտոներու թիւը չորսէն անելի եղած է, հրապարակային երկու անջատ ձեռնարկներով տեղի ունեցած են քննութեան հրապարակային ելոյթները:

Թեքէլեան երաժշտանոցի շրջանաւարտներէն հինգը Լիբանանի Պետական երաժշտանոցի ուսուցչական այժմու կազմին մէջ են.- 1980ի շրջանաւարտներ՝ Հուրի Սարաֆեան-Սաթեան եւ Լիզա Թիթինճեան (դաշնամուր), 1984ի շրջանաւարտ՝ Սանտրա Չոլաքեան (դաշնամուր)⁸, 1985ի շրջանաւարտ՝ Ալին Պուտաքեան-Թեքէլեան (դաշնամուր) եւ 1988ի շրջանաւարտ՝ Կարօ Պասմաճեան (ջութակ):

Երաժշտանոցի իմ ուսուցչական 15 տարիներու ունեցած եմ 12 շրջանաւարտ: Անոնց չորսէն եւ երկու ուրիշ շրջանաւարտներէ խնդրեցի իրենց գրաւոր վկայութիւնը, թէ՛ երաժշտանոցը ինչ ազդեցութիւն ունեցած է իրենց ապագայ երաժշտական ասպարէզին վրայ: Անոնք սիրով ընդառաջեցին խնդրանքիս: Այս վեց շրջանաւարտներն ալ դարձած են ասպարէզով երաժիշտներ: Ստորեւ կը ներկայացնենք անոնց վկայութիւնները:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ⁹

Ա. 1980ի շրջանաւարտ Հուրի Սարաֆեան-Սաթեան¹⁰

Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանին դրացիի մը խրախուսումով՝ տարիներ անձնական ուսուցչուհիի հետ (Սեդա Գարակէօզեան) աշխատելէ ետք, ուղղուեցայ Թեքէլեան երաժշտանոց, ուր բախտը ունեցայ ծանօթանալու երաժշտանոցին տնօրէն, հիանալի երաժիշտ եւ մանկավարժ՝ պրն. Մինաս Թեքէլեանին, չիմանալով ինչպիսի հետաքրքիր ուղի էր վիճակուած ինծի անցնելու այնտեղ: Անմոռանալի էր առաջին հանդիպումս նոր ուսուցչուհիիս՝ Ռուպինա Արթինեանին հետ: Բանիմաց անձնաւորութիւն, անկեղծութեամբ խանդավառուող, գրկաբաց ընդունեց զիս, իր ընդունակութիւններն ու գիտելիքները փոխանցելու մէջ շոյլ էր...այս բոլորին գումարելով պրն. Մինասի յատուկ ուշադրութիւնը եւ հաւատքը իմ ...նկատմամբ խթան հանդիսացան անելի հաստատկամօրէն քալելու՝ օրէ օր յստակօրէն ուրուագծուող երաժշտական ուղիիս մէջ: Սքանչելի մթնոլորտ կը տիրէր դպրոցէն ներս պրն. Մինասի առաջնորդութեամբ. ան գիտէր աշակերտին հոգուն մէջ սէր սերմանել դէպի երաժշտութիւնը, ուսուցիչն ու աշակերտը հաւասարապէս քաջալերել ու մղել՝ երկուստեք ձգտելու գերազանց արդիւնքներու: Եւ այսպէս, խստապահանջ ղեկավարի եւ կարող դասատուներու աշխատանքը անպայման իրենց բեղմնաւոր արդիւնքը պիտի տային բազմաթիւ աշակերտական համերգերու ընդմէջէն: Բեղմնաւոր պիտի ըլլար նաեւ երկար տարիներու վրայ տարածուած իրենց հարուստ հունձքը, որոնցմէ մէկն էի ես... Յաջողութեամբ ասարտելով Թեքէլեան երաժշտանոցը, նոյնպիսի յաջողութեամբ ընդունուեցայ Լիբանանի Պետական երաժշտանոց՝ ի բախտա-

⁸ Մաթիլտ Սանտրա Չոլաքեան 1992-2023 դաշնամուր դասաւանդած է Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ: Ան 2012-23՝ երաժշտութիւն դասաւանդած է նաեւ Լիբանանեան համալսարանին մէջ:

⁹ Վկայութիւնները կու տանք յապաւումներով:

¹⁰ Իր վկայութիւնը կը կրէ 14 Մարտ 2024 թուականը:

տրութիւն ինծի, յաջորդ վարպետ ուսուցիչի՝ Արփի Զրոյեանի¹¹ դասարան: Զրոյեան վառ անհատականութիւն ունէր, խնամքով կը մատուցէր իր գիտելիքներն ու ցուցմունքները:

Բ. 1984ի շրջանաւարտ Մաթիլտ Սանտրա Չոլաքեան¹²

I attended Tekelian Preparatory Music School from 1978 to 1983. I was taught by Mrs. Roubina Artinian who worked meticulously with great passion and dedication so that I was admitted to the Lebanese National Conservatory of Music, which by that time was difficult. Students were admitted after undergoing an entrance exam for selection of the top few students.

Tekelian music school had high standards, having excellent teachers and collaborated with the Lebanese National Conservatory.

After I graduated from the Lebanese Conservatory, I was privileged to teach and present student concerts that were of such a high level that the students were admitted to the Lebanese Conservatory without presenting entrance exams.

I feel great gratitude and appreciation to the Tekelian Preparatory Music School, which was founded by the great artist Minas Tekelian and was managed by his wife Ovsanna Tekelian, after he passed away.

Գ. 1985ի շրջանաւարտ Ալինա Կիլվանէսեան-Տազէսեան¹³

Հինգ տարեկանիս, դաշնակի ուսուցչուհի օր. Արտեմիս Պոյաճեանին հետ սկսայ դաշնամուրի դասերու: Իր ծննդաբերութենէն ետք սկսայ Թեքէլեան յաճախել, ուր ուսուցիչ ունեցայ Նորա Ռումեանը: Կը յիշեմ՝ սիկարէթ կը ծխէր դաս ըրած ատեն. մոխրամանը ստեղնաշարին ծայրը դրած կ'ըլլար, կամ ալ փիանոյին վրայ. երբեմն, երբ նոր կտոր մը պիտի նուագէր՝ սիկարէթը բերանը կը նուագէր, տեղ մը կը կենար, կը մարէր սիկարէթը, յետոյ կը շարունակէր նուագը: ... Ես ալ կ'երագէի որ օր մը պիտի մեծնամ, փիանոյի ուսուցչուհի պիտի ըլլամ եւ սիկարէթ պիտի ծխեմ դաս տուած ատենս...: Երաժշտանոցին դասագիրքերս գրատուն Ապաճեանէն կը գնէինք: Իսկ փիանոն գնեցինք պատուելի Աբարդեանէն, որ ընտանեօք Հալէպ պիտի փոխադրուէր, հովութեան:

Թեքէլեանի հանրային համերգերը Կիրակի օրերը կ'ըլլային: Այդ օր տիկին Ովսաննան մագերը շինած կ'ըլլար: Նուիրուած կին էր: Ինք եւ պրն. Մինասը միասին կու գային երաժշտանոց ու միասին կը վերադառնային տուն: Երբեմն տիկին Ովսաննան շուկայ կ'իջնէր տնային գնումները ընելու: Կը յիշեմ պրն. Մինասը՝ Թեքէլեանի երկար աստիճաններէն յոգնած վեր կը հասնէր: Պզտիկները կը քաջալերէր, հոգածու էր, ժպտուն, պապայի պէս էր:

Հին շէնք մըն էր Երաժշտանոցը: Տեղ-տեղ սալայատակ գետինը խորտուքորտ էր: Դռնէն նախասենեակ մը կը մտնէինք, յետոյ մեծ սենեակ մը կար բարձր առաստաղով եւ հին կահոյքով... խոշոր գրասեղան մը, որուն ետին միշտ նստած կ'ըլլար պրն. Թեքէլեանը, իսկ իր ետին պատշգամբ էր: Այդ մեծ սենեակէն

¹¹ Արփի Թէլեան-Զրոյեան շրջանաւարտ է Պէյրութի ապա եւ Հռոմի Սանթա Չիչիլիա երաժշտանոցներէն:

¹² Վկայութիւնը կը կրէ 3 Մարտ 2024 թուականը:

¹³ Վկայութիւնը կը կրէ 2 Ապրիլ 2024 թուականը:

միջանի դռներ կը բացուէին դէպի դասարանները: Քննութիւններուն, այս մեծ սենեակը ձեւափոխուած կ'ըլլար. աթոռներ դրուած կ'ըլլային, փիանոներէն մէկը սենեակէ մը դուրս հանուած կ'ըլլար, պետական երաժշտանոցէն կու գային դատակազմի անդամներ (Պօղոս Ճելալեան, Մատլէն Մըտառար, Արփի Զրոյեան), մեր ուսուցիչները ներկայ կ'ըլլային: Քննութեան արդիւնքները շաբաթ մը ետք, նախասենեակին պատին դրուած կ'ըլլային: Հոն կը դրուէին յայտարարութիւնները:

Կանոնաւորաբար Թեքէլեան կ'երթայինք բան մը սորվելու, բան մը իրագործելու, շատ լուրջ էր մեզի համար, ժամանց չէր, չէինք մտածեր ընել-չընելու մասին: Թեքէլեանի երաժշտանոցէն անմոռանալի կը մնայ իմիջիպայլոց երկու քոյրերուս եւ 2 հօրեղբօրորդիներուս հետ, Թեքէլեանի մուտքին հինգ փոքրիկներուս խմբանկարը:

Պատերազմին սկիզբը, 1975ին, Հալէպ գացինք: Վերադարձանք երբոր՝ փիանօն չշարունակեցի, մինչեւ ՀԲԸՄ Դարուի Յակոբեան աղջկանց երկրորդական վարժարանը աւարտելս: 1983ին վերսկսայ, այս անգամ օր. Անի Սարաֆեանին հետ, որուն հետ ալ աւարտեցի Թեքէլեան երաժշտանոցը 1985ին: Ռումեանը ձգեր էր երկիրը: Յետոյ անցայ Քասիքի Սենթ Էսփրի համալսարանի երաժշտագիտութեան բաժինը, ուր ուսուցչուի ունեցայ աննման տիկ. Սոնա Քիսիլեանը: Համալսարանը աւարտելէս առաջ իսկ սկսայ դաշնամուր դասաւանդել Համազգայինի Բարսեղ Կանաչեանի անուան երաժշտական դպրոցին մէջ, աւելի քան քսան տարի եղած եմ երգ-երաժշտութեան ուսուցիչ եւ կազմակերպած եմ աշակերտներուս հրապարակային համերգերը: Այսօր՝ կու տամ դաշնամուրի անձնական դասեր:

Թեքէլեան երաժշտանոցը Մար Մըխայէլի շրջանին մշակութային ինքնութիւն տուող կառոյց էր: Իմ երաժշտական ասպարէզիս մէջ Թեքէլեան երաժշտանոցը ուղղորդող դեր ունեցաւ:

Դ.- 1987ի շրջանաւարտ Նեկտար Թիւմպերեան-Փալազեան¹⁴

Փոքր հասակէս մարմաջը եւ մեծ սէրը ունեցած եմ երաժշտութեան հանդէպ, մանաւանդ՝ դաշնամուրի, սակայն Այնճարի մէջ չկար միջոցը եւ առիթը՝ երաժշտութեան հանդէպ ունեցած սէրս զարգացնելու եւ երազս իրականացնելու:

Առաջին քայլերս դէպի երաժշտութեան ոլորտ կը պարտիմ Էմիլի Թիւքեանին. կարճ ժամանակի ընթացքին իր դաշնամուրային դասընթացքներով եւ ինքնաշխատութեամբ կարողացայ դաշնամուր նուագել ու Այնճարի Հայ աւետարանական եկեղեցւոյ Կիրակի օրուան պաշտամունքի երգեցողութեան դաշնամուրի նուագողը ըլլալ: Այդպէս սկսաւ իմ երաժշտական կեանքիս սկիզբը, ուր բարեբաստիկ օր մը հանդիպեցայ տիկին Ռուպինա Արթինեանին, եւ երբ ան տեղեկացաւ պատուելի Յովհաննէս Սարմազեանէն, թէ որքան կը փափաքէի երաժշտանոց յաճախել, իր առաջարկը եղաւ՝ Թեքէլեան երաժշտանոց գալ: Այսպիսով Թեքէլեանը եղաւ երաժշտութեան օճախս, իսկ տիկին Ռուպինան՝ ուսուցչուիս: Այդ օրերուն տիկին Ռուպինան եւ ես մեծ դժուարութեամբ կը հասնէինք երաժշտանոց, որովհետեւ պատերազմ էր: Սակայն ոչ մէկ դժուարութիւն կրցաւ ընկճել շարունակելու եւ պայքարելու կամքս:

¹⁴ Վկայութիւնը կը կրէ 14 Մարտ 2024 թուականը:

Չորս տարի յաճախեցի Թեքէլեան երաժշտանոց եւ վկայուեցայ: Առանց հօրս ու մօրս քաջալերանքին եւ Թեքէլեան երաժշտանոցին, պիտի չկարենայի իրականացնել երազս: Ուստի Թեքէլեան երաժշտանոցը եղաւ բանալին իմ երաժշտական գործունէութեանս:

...Երբ աղջիկս 5 տարեկան եղաւ, ինք ալ բախտը ունեցաւ Թեքէլեան երաժշտանոց յաճախելու, ուսուցիչ ունենալով Ալին Թեքէլեանը: Ստանալէ ետք Թեքէլեանի վկայականը, ան իր ուսումը շարունակեց Լիբանանի Պետական երաժշտանոցին մէջ, ապա Լոնտոնի մէջ ստացաւ իր երաժշտական մագիստրականը:

Ասիկա մեծ վկայութիւն է, որ Թեքէլեան երաժշտանոցը եղած է եւ կը շարունակէ ըլլալ հայ երաժշտասէրներու դարբնոց:

Թեքէլեան երաժշտանոցին շնորհիւ այսօր հայ երգն ու երաժշտութիւնը կը փոխանցեն հայ աշակերտին՝ հայկական դպրոցներէ ներս, որպէս երաժշտութեան դասատու եւ խմբավար:

Երախտագիտութեան եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներս Թեքէլեան երաժշտանոցին: Վարձքը կատար բոլոր ուսուցիչներուն եւ տնօրէնութեան:

Ե. 1988ի շրջանաւարտ Քրիսթիան Քարամ¹⁵

My musical journey began in 1980 at Tekelian Music School. Apparently since a very young age, I greatly enjoyed rhythms and sang nonstop, so my mother, an accomplished pianist herself, signed me up for piano lessons. It was the height of the Lebanese civil war, and Tekelian School was walking distance from our home, and manageable. Also, most other musical institutions were shut down in light of the prolonged armed conflict.

I awaited Saturday mornings with bated breath. My brothers and I all had piano lessons with the wonderful Mrs. Artinian, and I would conscientiously practice every day so I could show her my progress from week to week. I still remember like it was yesterday the first time she drew middle C on the bottom staff and showed how to connect the notes on the page to the notes on the piano. I will never forget the excitement of the first time I could play with both hands together, 'at the same time!' and showing off to a relative who was visiting us that I was now able to do that. My first public recital, that same year, I played a Streabbog waltz in the Assembly Hall of the American University of Beirut, which to this day fills my heart with joy. I remember the dress, the shoes, the stage fright and then the applause. I was hooked. It was miraculous that Mrs. Artinian could make it to her lessons every week, crossing checkpoints and risking being separated from her family to mentor our musical talent. This continued for many years, with many ups and downs, recitals, final exams, pauses necessitated by war and then on again. I remember understanding at that very young age how resilient and brave we were, to dare to keep moving forward and playing and learning music, with so much devastation around. It very quickly became a safe haven, and having that school and everything it stood for in the midst of raging civil war was nothing short of a blessing. One particularly difficult moment I remember was a recital we had planned, also at the Assembly Hall, in 1988 - and we had to cross to the other side of the city the night before, with sniping all around

¹⁵ Վկայութիւնը կը կրէ 27 Փետրուար 2024 թուականը:

us so we wouldn't jeopardize the event. The stress was so intense that the next day I froze on stage for the first time and was devastated. It was a great lesson, though, and it helped me present my graduation recital with flying colors a short few weeks later.

War, and later college, took a toll, and I soon had to prioritize healing from it all and picking a career path. I was very passionate about music, and while I pursued a Bachelor of Science at AUB and a degree in Psychology at Saint Joseph University, I couldn't leave it behind. I knew I wanted to write music, so I embarked on several years of composition studies with the late Maestro Boghos Gelalian, who helped give me the confidence I needed to take the leap and commit to a musical career. I was accepted at the prestigious Berklee College of Music in Boston and began a double major in Film music/Song writing and Piano/Vocal studies in 1998. In 2003 I was accepted at the New England Conservatory of Music, where I graduated with a Masters in Contemporary Improvisation.

I have been on the faculty of Berklee College of Music since 2007, where I now serve as a full professor. While I perform, write and produce as well, my most important calling has been to educate and to help our young believe in themselves and their dreams. It has been my privilege to also create and teach the Middle Eastern as well as the Music and Social Change curriculum, to encourage artists to use their voice for the higher good. I founded the Berklee Annual Middle Eastern Festival in 2009, a dream that emerged after I experienced firsthand the rampant prejudice against Arabs and the misinformation that mainstream media disseminated about our part of the world. We have just celebrated the 15th Anniversary of this festival, which has become one of the most celebrated festivals of Middle Eastern music in the country - and we have hosted many prestigious artists from the region over the years, and of course from Armenia (Kevork Mourad, Zulal Trio, Tigran Hamasyan).

I also released a piece named Beirut in late 2021, which was written in the immediate aftermath of the August 4, 2020 explosion and which was a tribute to everyone who continues to struggle against violence and injustice around the world.

None of this would have been possible without my formative years at Tekelian School of Music. The discipline, the affection, the laughs, the encouragement we got from the teachers, but also the rigorous lessons and curriculum all greatly contributed to my skills and confidence as an artist, performer and composer. When I went back many years ago to visit the neighborhood and saw the building had been demolished, a piece of my heart broke with it. But I will cherish the memories forever.

2. 1988ի շրջանաւարտ, ջութակահար Կարօ Պամմաճեան¹⁶

1982-88 շրջանին յաճախած եմ Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցը, Ովսաննա Թեքէլեանի տնօրէնութեամբ: Այդ տարիները երկրի քաղաքացիական պատերազմի անհանգիստ եւ մռայլ տարիներ էին, մարդիկ ապահովութեան եւ անվտանգութեան որոնումով բռնած էին գաղթի ճամփան: Հետեւաբար իմ ուսման ժամանակ, յաճախակի էր երաժիշտ ջութակահար դասատուներու փոփոխութիւնը: Ոմանք գաղթեցին, իսկ ուրիշներ ծերութեան կամ առողջական

¹⁶ Վկայութիւնը կը կրէ 24 Մարտ 2024 թուականը:

տարբեր պատճառներով, միայն կարճ ժամանակ մը կրցան դասաւանդել: Անոնցմէ ոմանք այժմ պատկառելի տարիքի են, իսկ միւսները՝ այս աշխարհէն հեռացած, թող որ իրենց յիշատակը մնայ միշտ անթառամ: Ինծի համար մեծ պատիւ է հիմա յիշատակել ամէնուն անունները, որոնցմէ իրաքանչիւրը իմ մէջ դրոշմած է ջերմագոյն յիշողութիւններ: Կարգով կը նշեմ Սարգիս Քսաճըքեան, Լուսինէ Պալիկեան, Օննիկ Սիրմէլեան, Տիգրան Ապաճեան, Յակոբ Էսմէրեան: Թեքէլեան երաժշտանոցը այն ժամանակ գործող միակ հայկական երաժշտական դպրոցն էր Լիբանանի պետական ճանաչումով, ուրկէ շրջանաւարտ եղած են 1988ին որպէս ջութակահար: Պէյրութի սրտին մէջ գտնուող Մար Մըխայէլ թաղամասի այս խորհրդաւոր շէնքը, ուր կը գործէր երաժշտանոցը արժանի է ամէն բարձր գնահատանքի: Սփիւռքի մէջ երաժշտական դպրոց հիմնելու գաղափարը, իրագործել զայն եւ պահպանել մինչեւ այսօր յանձինս պրն. Մինաստիկ Ովսաննա-տիկ. Ալին Թեքէլեաններու, ինքնին ազնուական ու հերոսական գործ է:

Անշուշտ տարբեր դերակատարութիւններ ունեցած է երաժշտական դպրոցը, բայց անձնապէս ինծի համար կարեւոր է որ նշեմ՝ Թեքէլեանը **օճախ** է որ իր երդիքին տակ հաւաքած է որակեալ երաժշտական հասարակութեան խումբ մը մարդիկ, որուն մէկ վկան ալ ես եմ: Գիտելիքներ, յուսալի մարդկային շփումներ եւ նոր ծանօթութիւններ, առողջ ու խորհրդաւորութեամբ լեցուն մթնոլորտ պարունակող վայր մը, որ կարելի չէ չսիրել եւ չյիշել:

Մանկութեան յիշողութեանս անբաժան մասն են նաեւ աշակերտական համերգերը, ...որոնք ջանասիրաբար կազմակերպուող եւ ամենայն բժախնդրութեամբ տեղի ունեցող երեկոներ էին տիկին Ովսաննայի շնորհիւ: Անոնք խանդավառութիւն, ինքնավստահութիւն ներշնչող, յետագայ յաջողութիւններու խթան դարձող պահեր էին:

ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻՆ ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մինաս Թեքէլեան մեծ բժախնդրութեամբ տնօրինած է իր հիմնած երաժշտանոցը իր տիկնոջ օգնութեամբ մինչեւ իր մահը՝ 1981: Իր մահէն ետք իր տիկինը՝ Ովսաննա Թեքէլեանը կը ստանձնէ երաժշտանոցին տնօրէնութիւնը, եւ օգնութեամբ զինք շրջապատած որակաւոր ու հաւատարիմ ուսուցչակազմին, ձեռնհասութեամբ կը շարունակէ տնօրինել մինչեւ 1995, որմէ ետք հարսը՝ դաշնակահարուհի Ալին Պուտաքեան-Թեքէլեան (Թեքէլեան երաժշտանոցի 1985ի շրջանաւարտ), կը ստանձնէ տնօրէնութիւնը ու զայն կը վարէ մինչեւ այսօր:

1992ին, յատուկ համերգով մը կը տօնուի երաժշտանոցին 20ամեակը: Այդ տարին, Լիբանանի Պետական երաժշտանոցին հետ կայացած համաձայնութեամբ, մինչեւ օրս երաժշտանոցին քննութիւնները եւ վկայականները Պետական երաժշտանոցը կը հովանաւորէ:

Թեքէլեան երաժշտանոցը 12 տարիէ ի վեր փոխադրուած է Անթիլիաս, Սիմիթեան շէնքեր, «Գառնի» շէնքին գետնայարկը:

Երաժշտանոցը կը գործէ 12 ամիս, Երկուշաբթիէն Շաբաթ, առտուան ժամը ութէն մինչեւ երեկոյեան ժամը ութ: Ալին Պուտաքեան-Թեքէլեանի

աշխատանքով բարգաւաճած է ան, ուր մեծաթիւ ուսուցչակազմ մը կը գործէ: Բազմատեսակ նուագարաններու ուսուցումը կը յարմարի մեր օրերու աշակերտներու պահանջներուն: Պարտադիր *սոլֆեժի* դասերու կողքին, կը դասաւանդուին դասական, հայկական եւ արաբական երաժշտական գործիքներ՝ աքորտէոն, դաշնամուր, եուքուլէլէ, թաւջութակ, թիմփանի, թմբուկ, կիթար, մանտոլին, մարիմպա, նայ, ուտ, պաղլամա (թրքական փոքր սազ), պինկո, պուզուքի, ջութակ, սազ, սաքսոֆոն, սրինգ, վիոլա, տէֆ (տափ), տուտուկ, տրպաքքէ, քաժու, քլարինէթ, հայկական եւ արաբական քանոն, ծայնամարզութիւն: Կայ նաեւ ... ճատրակի դասընթացք՝ բոլոր տարիքներու համար...:

Մինաս Թեքէլեանի երազը կը շարունակէ իրականացած մնալ 54 տարիներէ իվեր:

Ստորեւ կը կցենք Մինաս Թեքէլեանի կենսագրականը:



Մինաս Թեքէլեան (1910-1981)¹⁷

Ծնած է Գերմանիկ, Մարաշ, 1910ին: Երգի սէրը բնատուր էր իր մէջ: Չորս տարեկանին սկսած է փողահարել՝ ձեռքին ու շրթներուն մէջէն ձայներ հանելով, երգելով, թաղի տղաքը իր ետեւէն տողանցել [տալով]: Բայց երկար չի տեսեր [ասիկա]. միքանի ամիս յետոյ կը պայթի առաջին համաշխարհային պատերազմը: Շնորհիւ հորեղբօր (որ զինուորական ծառայութեան բերումով կը մնայ երկիր), կը փրկուի Մինասի կեանքը: Մինասի կը վիճակուի որբութիւն եւ Մարաշի գերմանական որբանոց: Փողը ձեռքէն չի ձգեր: Որբանոցին մէջ կը հետեւի սոլֆեժի:

1920ին որբանոցը կը փոխադրուի Պէյրութ, Ճիպէյլ գիւղը: Որբերը իրենց ձեռքերով կը շինեն որբանոցին շէնքը: Հիմնաքարին տակ կը զետեղեն շիշ մը, որուն մէջ կը գտնուի շինութեան մասնակցող որբերուն անունները, որուն մէջ փոքրկ Մինասին անունն ալ կայ: Որբանոցին մէջ իր առաջին դաստիարակ ուսուցիչը կ'ըլլայ ... Կոստան Պատիկեան: Միեւնոյն ժամանակ կը հետեւի երաժշտութեան, շնչաւոր գործիքներու վրայ աշխատելով: Կը մտնէ որբանոցի նուագախումբին մէջ: Իր առջեւ կը բացուի երաժշտական արուեստի ճամփան, որ կը դառնայ կեանքի նպատակ: Պէյրութէն որբանոց կը հրաւիրուի երաժշտագէտ եւ երգահան ... Յակոբ Իսկէզեան, որ կը քաջալերէ զինք: Մինաս կ'ուզէ ամէն շնչային գործիք նուագել սորվիլ: ...Միքանի ամիս յետոյ նուագախումբը կ'ունենայ

¹⁷ Կենսագրութիւնը - մեր փափաքին հիմամբ - գրուած է իր կնոջ Ովսաննա Թեքէլեանի կողմէ եւ մեզի յանձնուած 1982ին: Զայն կու տանք յայտումներով ու մանր հպումներով:

մնայուն ղեկավար մը, Յարութին Պիլպիլեան: Մինաս կը սկսի թրոմպոն նուագել շատ յաջող: Իսկէգեանի քաջալերանքով Մինաս սկսած է նոթաները կարողալ եօթը բանալիներով: 1924ին որբանոցը կը հիւրընկալէ ֆրանսական բանակի նուագախումբին քափիթէնը, որ մտիկ ընելէ ետք որբանոցին նուագախումբին կատարումը, շատ գոհ մնալով՝ կ'առաջարկէ որ Մինաս զինուորական նուագախումբին միանայ իբրեւ թրոմպոնիստ: Զինուորական նուագախումբին մէջ մտնելու համար ...կը ստիպուին իր տարիքը չորս տարիով մեծցնել: Այդ տարիներուն [Մինաս] հետեւած է Փարիզի երաժշտանոցի դասընթացքներու: Վկայականի տարին քափիթէնը վկայագիր մը տուած է, Փարիզի երաժշտանոցի վկայականին համազօր, եւ խնդրած իրմէ որ Փարիզ երթայ եւ վկայականը ստանայ: Սակայն Մինաս որբ է, ու՛ր երթայ: Կ'ըսէ՝ «երբ ես նուագել գիտեմ վկայական ի՞նչ պիտի ընեմ, կարելորդ նուագելն է»:

Մինաս մասնակցած է Պէյրութի Կրան թէաթրի բացումին, Լիտոյի բացումին, նուագած օտար նուագախումբերու մէջ: 1930ին պայմանագրութիւն կնքած է Հալէպի զինուորական նուագախումբի հետ իբրեւ թրոմպոնիստ: 1934ին մեկնած է Պաղտատ, Պասրա ապա Պարսկաստան, մինչեւ 1937ի սկիզբը: 1937 Մարտ 14ին հրաւիրուած է Հնդկաստան, Մատրաս քաղաքը, ուր աշխատած է մինչեւ 1940ի վերջը, ապա եկած է Պէյրութ: Արդէն կատարելագործած է նուագել թրոմպոն, քոր, քլարինէթ, թրոմփէթ եւ քոնթրապաս:

Իր հետ աշխատակից ունենալով թաւջութակահար Mr. Dal, եւ դաշնակահար Mr. Tcheskinof, միասնաբար պայմանագրութիւններ կը կնքեն օտար երկիրներու հետ: Պէյրութի մէջ հինգ տարի աշխատելէ ետք, անոնք 1945ին կը մեկնին Ամման, յետոյ Դամասկոս, մինչեւ 1959: Dal, 1959ին կը հրաւիրուի Պէյրութի Պետական երաժշտանոց իբրեւ տնօրէն: 1960ին Մինաս եւ Tcheskinof կը հրաւիրուին Պէյրութի Պետական երաժշտանոց, իբրեւ ուսուցիչներ: Մինաս՝ ուսուցիչ թրոմպոնի եւ քորի, միեւնոյն ատեն կը միանայ երաժշտանոցի նուագախումբին: Տասնամեակ մը ամբողջ կը գործակցի լիբանանցի երաժշտական հանրաժանօթ ընտանիք Րահպանիներուն հետ, իբրեւ թրոմպոնիսթ միանալով անոնց նուագախումբին: Աշխատակցած է նաեւ լիբանանցի նշանաւոր յօրինող Ռոմիօ Լահուտին, երգիչ-յօրինող Ուատիի Սաֆիին եւ ուրիշ շատերու հետ:

Ամբողջ տասնամեակ մը ան պատրաստած է փչողական գործիքներու որակաւոր աշակերտներ: Իր աշակերտուիկներէն երկուքը՝ Մարօ Փարթամեան եւ Աստղիկ Էսմէրեան, իրենց աշակերտական տարիներուն իսկ սկսած են նուագել երաժշտանոցի նուագախումբին մէջ իբրեւ քորիսթներ: Մինաս յաճախ իր աշակերտ-աշակերտուիկները կը պտտցնէր դպրոցներու մէջ նուագելու, որպէսզի նուագելու ինքնավստահութիւն ունենան:

Մինաս Թեքէլեան 1970ին հանգստեան կը կոչուի. իր ծառայութեան իբրեւ գնահատութիւն, կ'արժանանայ լիբանանեան «Մայրիկներու արժանեաց» շքանշանին, 24 Յունիս 1974ին: Կը հրաւիրուի օտար երկիրներ, բայց կընախընտրէ չհեռանալ Լիբանանէն:

Ան քոնթրապաս նուագած է 1 Մայիս 1962ին լիբանանահայ Վերածնունդ Միութեան ներկայացուցած «Լեպլեպիճի Հորիոր աղա» օփերէթի համերգի նուագախումբին հետ (երգչախումբի խմբավար՝ Օննիկ Ասատուրեան): Եղած է Լիզպոն, 1965ին Լիբանանահայ երգի պարի անսամպլով, նոյն խումբով մեկնած է Պաղտատ եւ Կիպրոս:

Մինաս յաճախ մտքին մէջ կը ծրագրէր երաժշտանոց մը բանալ: Երբ հանգստեան կոչուեցաւ, ձգտեցաւ անձուկ պայմաններով ու բազում դժուարութեամբ ձեռնարկել իր երաժշտանոցի հիմնադրութեան: Երկու տարիներու տենդագին եւ ցաւատանջ երկունքէ մը ետք հիմնուեցաւ երաժշտանոցը, որուն բացումը կատարուած է ներկայութեամբ Պետրոս Ալահայտոյեանի¹⁸, հայր Կոմիտաս Օհանեանի, տէր եւ տնօրէն Մինաս Թեքէլեանի, առաջին աշակերտուհի Սիւզի Փարթամեան, առաջին ուսուցչուհի Նորա Ռումեանի:

Երաժշտանոցը առաջին տարին ունեցաւ շատ քիչ թիւով աշակերտ-աշակերտուհիներ: Տարուէ տարի [թիւը] աւելցաւ, եղաւ մինչեւ 150..., հայ եւ ոչ-հայ: Առաջին շրջանաւարտը Անի Աշնեանն է (դաշնակ): [Այնուհետեւ երաժշտանոցը], 1978-79ին կ'ունենայ երկու վկայեալ՝ Մարիա Թաթեան եւ Սոնա Գրգռշեան (դաշնակ), 1979-80՝ չորս վկայեալ՝ Լիզա Թիւթիւնճեան (դաշնակ), Հուրի Սարաֆեան (դաշնակ), Հրաչ Սարգիսեան (ջութակ), Փիլի Գարակէօզեան (ջութակ), 1980-81 չորս վկայեալ՝ Յասմիկ Մելքոնեան (դաշնակ) Հուրի Մանուկեան (դաշնակ), Շուշան Թաթեան (դաշնակ), Զելա Կոստանեան (դաշնակ): Իր մահէն յետոյ 1981-82 տարեշրջանին երկու վկայեալ ունեցանք՝ Ռաֆֆի Մուրատեան (դաշնակ), Յովիկ Սարգիսեան (դաշնակ)¹⁹:



1985 համերգի յայտագրին առաջին էջը եւ ...այժմու երաժշտանոցի մուտքին, Ալին Թեքէլեան եւ Ռուպինա Արթինեան

¹⁸ Երաժշտագէտ Պետրոս Ալահայտոյեան սկիզբէն եւեթ զօրավիզ կանգնած է Մինաս Թեքէլեանին եւ իր հիմնած երաժշտանոցին ու նուիրած է շուրջ վեց ջութակ առ ի քաջալերանք երաժշտանոցին:

¹⁹ Ներկայիս Թեքէլեան նախապատրաստական երաժշտանոցը ունի իր Facebook, Instagram, Tictoc ընկերային ցանցերը, հետեւեալ հասցեով.- Tekelian. music, school , իսկ հեռաձայնի թիւերը՝ 04 413165 եւ 03 796755:



Ա. Կարգ, ծախէն աջ՝ Քիւփէլեան, Ճելալեան, Զրոյեան, Ուալիտ Ղըլմիէ (պետական
երաժշտանոցի տնօրէն), Փեիլիանեան-Մըտաուար, Արթինեան, Ալին
Մանուկեան, տղըք. Անդրանիկ Մանուկեան եւ..աջէն ծախ՝ Մըտաուար, Ովսաննա
Թեքէլեան, Ճելալեան ու Պօղոս Բանճարեան



Մինաս Թեքէլեան կը ղեկավարէ իր կազմած երգչախումբը ...եւ Ովսաննա
Թեքէլեան փոքրիկ աշակերտներու հետ



Ձախենաջ՝ Ռաֆֆի Սափսրզեան, Ճելալեան եւ Թեքէլեան... եւ 1983ի համերգէն
ետք, ուսուիչ-շրջանաւարտ խմբանկար. ձախէն աջ՝ Օ. Թեքէլեան,
Սաղպազարեան, Արթինեան, Քսաճըքեան, շրջաւարտ Արլէթ Յովսէփեան,
Սափսրզեան, Սարաֆեան Արփի Քեշիշեան եւ Նորա Ռումեան





1974. Մինաս Թեքելյան կը ստանայ «Մայրիներու արժանեաց» շքանշանը եւ...Ո.
Թեքելյան աշակերտուիի մը հետ, իին երաժշտանոցին մուտքի պատշգամին



Երաժշտանոցի հիմնադրութեան 20ամեակի հանդիսութեան խմբանկար, 1992

MINAS TEKELIAN AND THE
TEKELIAN PREPARATORY MUSIC SCHOOL HE FOUNDED IN BEIRUT IN 1972
(SUMMARY)

ROUBINA ARTINIAN
roubina.alahaydoyan@gmail.com

Minas Tekelian, an orphan who grew up to become a well-known musician in Lebanon and the Middle East, in 1972, by his own initiative, without the help of any association or the state, founded the first preparatory music school of Lebanon, in Beirut, for beginners, to help them learn solfeggio, theory of music and to play an instrument before entering the National Conservatory of Music. A few years later, in 1975, the civil war broke out in Lebanon, which lasted till 1990, but the Tekelian Preparatory School of Music kept open its doors against all odds.

The author of this paper narrates briefly the 15 years of the school (1975-1990) during which she taught at Tekelian music school as a piano teacher. The paper also highlights the echoes of the Armenian press about the newly founded music school; it describes its curriculum, programs of public auditions, teachers, and graduates. The paper includes testimonies of six graduates who became professional musicians. The paper includes an overview of the graduates, photos of documents and auditions, and finally Minas Tekelian's biography, written by his wife Ovsanna.